բում։ Զոհաբերութիւնը մեծ չէր լինել, որովհետև շատ կարճ միջոցում կարելի է թերութիւններից շատերը ուղղել. իսկ գրքոյկի տիպը, իւր վատ թղթով հանդերձ, երևի, մի քանի տասնեակ ռուբլուց աւելի նստած չի լինել, չը նայած որ գինը 30 կոպէկ է նշանակուած։

Ա. Ա.

---

**ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ԿՈՍՏԱՆԴԻՆ. «ՓԵՐԱՆՔ» (նուէր հայ երեխաներին)։ Շուշի, տպարան Հոյոց Հոգևոր Տեսչութեան, 1888 թ., փոքր քառածալ, 70 երես, տառ № 12. գինն է 15 կոպէկ։**

---

Մաքուր ու կոկիկ լեզուով [1]) գրուած այս գրքոյկը պարունակում է իւր մէջ մի քանի արձակ ու ոտանաւոր հատուածներ մանկական ընթերցանութեան համար։ Արձակ գրուածներից մի քանիսը նոյնպէս չափով են գրուած, բայց ոչ ոտանաւորի ձևով չարուած. օրինակ, «Մի պատկեր զարնանային կեանքից» կոչուը։

Ոտանաւորներից լաւն է «Դարբինը», մասամբ էլ «Մի պատկեր զարնանային կեանքից»-ը. իսկ միւսները չ'ունին բանաստեղծական արժանաւորութիւններ, նրանք գրուած են այս ժանրով. «Հօտը ցրուել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել, հաւքերը թռել բունի մէջ պահուել, հովիւ, հորթաբած, փայտահատ, կովարած, ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած»... (երես 14) և այսպէս ամբողջ երեսներ։

Այդ տեսակ նկարագրութիւնները դուցէ մանկական ընթերցանութեան համար պէտքական լինին, բայց հաշիւ թէ երեխաների հետաքրքրութիւնը շարժեն։ Բոլորովին այլ տպաւորութիւն են անում «Գիշերապահ Մկոլի երազը» ու «Ելրոպալի և Կովկասի անբան անասունները» [1]) վերնագիրներով հետաքրքրական, կենդանի ու բնական ձևով գրուած և գեղեցիկ տենդենցիա պարունակող յօդուածները։ Աւելորդ են «Հացթուխ»-ի վերջին տողերը՝

«Ֆխուր երեսով ալիւր է մաղում,
Ալիւր է մաղում և խոր հառաչում...» (երես 41)։

Ինչու, ինչ պատահեց յանկարծ. դուցէ բազմակէտերի տակ ծածկուածը երեխաներին է թողում լրացնել։

Այսպէս, ուրեմն, վերև նշանակած յաջող յօդուածները ցոյց են տալիս, որ պ. Կ. Մելիք-Շահնազարեանցը կարող է մանկական ընթերցանութեան համար լաւ պատկերներ գրել և որ երեխաներին առաջարկուող այս «նէրը»։ ընդհանրապէս, արժէ տալ երեխաների ձեռքը։

Լ. Ս.

---

[1]) Թէև պատահում է այսպէսի մի դարձուած՝ «կանգնի փոխարէն, խոտ են արածում» (երես 8)։

[1]) Երեխաների համար կարելի էր և առանց «Տեղեկատու» խօսքի եօլա գնալ։